ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
«ԳՈՐԻՍԻ ՅՈՒ. ԲԱԽՇՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԹԻՎ 3 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ

Ուսումնական հաստատության անվանումը

Հաստատում եմ
Տնօրեն Դ. Կոստանդյան
«31» 08 2022թ.

# ԽՄԲԱԿԻ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ

ԱՌԱՐԿԱՅԻ (ՆԵՐԻ) ԱՆՎԱՆՈՒՄԸ Ֆրանսերեն
ԽՄԲԱԿԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ *Améliorons notre français*

ԾՐԱԳՐԻ ՀԵՂԻՆԱԿ *Անի Հայրապետյան*

Քննարկվել, հավանության է արժանացել «Գորիսի Յու. Բախշյանի անվան թիվ 3 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի մանկավարժական խորհրդի 31.08.2022թ. նիստում: Արձանագրություն թիվ 1 :

Քննարկվել, հավանության է արժանացել

Օտար լեզուների

մեթոդմիավորման 30.08.2022թ. նիստում: Արձանագրություն թիվ 1 :

Մեթոդմիավորման նախագահ ____________ Պետրոսյան Մ.
(ստորագրություն) (ազգանուն, անուն)

Ուսումնական աշխատանքների գծով տնօրենի տեղակալ ____________ Ավանեսյան Ս.
(ստորագրություն) (ազգանուն, անուն)

Մաս. կրթ․ աջակցության գծով գծով տնօրենի տեղակալ ____________ Գևորգյան Ա.
(ստորագրություն) (ազգանուն, անուն)

2022թ.

*ԽՄԲԱԿԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ՝ «Améliorons notre français»*

ԽՄԲԱԿԻ ԻՐԱԳՈՐԾՄԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԱՍՏԻՃԱՆԸ

ՏԱՐՐԱԿԱՆ ԵՎ ՀԻՄՆԱԿԱՆ (ՄԻՋԻՆ ԴՊՐՈՑ), 3-9-ՐԴ ԴԱՍԱՐԱՆՆԵՐ

*ԽՄԲԱԿԻ ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆԸ*

**Շաբաթական 1 դասաժամ**

**Ընդհանուր տևողությունը՝ 34** դասաժամ

ԽՄԲԱԿԻ ԲԱՑԱՏՐԱԳԻՐԸ

«Améliorons notre français» խմբակի պարապմունքները նպաստում են սովորողների ձեռք բերած գիտելիքների, կարողությունների, հմտությունների զարգացմանն ու ամրապնդմանը: Սովորողները կկարողանան գրավոր և բանավոր կերպով գրագետ հաղորդակցվել ֆրանսերենով՝ ըստ լեզվական կանոնների և իրավիճակների: Նրանք կկիրառեն լեզուն՝ որպես ուսումնառության և հասարակական կյանքին մասնակցության համապիտանի գործիք: Ֆրանսերեն լեզվով ընթերցումները, տեսալսողական առաջադրանքները, երգերը, խաղերը, երկխոսությունները կնպաստեն նաև «Ֆրանսերեն» առարկայի դասավանդման ընթացքում ձեռք բերած գիտելիքների և հմտությունների ամրապնդմանը: Աշակերտների մոտ կզարգանան հանրակրթական պետական չափորոշչի հանրակրթական հիմնական ծրագրերի շրջանավարտի ուսումնառության ակնկալվող հետևյալ վերջնարդյունքները. առնվազն երկու օտար լեզուներով (ազգային փոքրամասնությունների դպրոցների պարագայում՝ առնվազն մեկ) հասկանա ծանոթ, պարբերաբար հանդիպող թեմաներով բանավոր և գրավոր խոսքի հիմնական իմաստը, լեզվակիր երկրներում կարողանա կողմնորոշվել և հաղորդակցվել հաղորդակցական պարզ իրավիճակներում (ՀՊՉ Հ-3):

*ԽՄԲԱԿԻ ՆՊԱՏԱԿԸ*

Նպաստել աշակերտների բանավոր և գրավոր լեզվական հմտությունների խորացմանը՝ օգտագործելով օտար լեզուներով բանավոր խոսքի զարգացման տարբեր ուղիներ (ընթերցումներ, երգեր, խաղեր, տեսալսողական և տեսաունկնդրողական միջոցներ և այլն):

*ԽՄԲԱԿԻ ԽՆԴԻՐԸ*

Կարողանալ ճիշտ ձևակերպել բանավոր խոսքը, ֆրանսերեն լեզվով հաղորդակցման միջոցով կարողանալ գործել տարբեր իրավիճակներում, վարել տարրական զրույց, արտասանել պարզ կապակցված մտքեր, կռահել անծանոթ բառերի նշանակությունը, հարց կազմել և հարց տալ:

*ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ*

Այս դասընթացը յուրացնելուց հետ աշակերտը պետք է՝

1. Օգտագործել ֆրանսերեն լեզվով բանավոր խոսքի զարգացման տարբեր ուղիներ (ընթերցումներ, երգեր, խաղեր, տեսալսողական և տեսաունկդրողական միջոցներ և այլն):

*ԱՐԴՅՈՒՆՔ 1. Օգտագործել ֆրանսերեն լեզվով բանավոր խոսքի զարգացման տարբեր ուղիներ (ընթերցումներ, երգեր, խաղեր, տեսալսողական և տեսաունկդրողական միջոցներ և այլն):*
*ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ*

- հասկանալ և կարողանալ հրավիրել որևէ մեկին միջոցառման, տոնախմբության,
- հասկանալ կարճ նկարագրության ընդհանուր միտքը և տալ տեղեկություն այդ մասին: Օրինակ՝ ինչ մասնագիտություն ունես, որ երկրից ես:
- կարողանալ նկարագրել ընկերոջը
- ներկայանալ, ներկայացնել ընտանիքի անդամներին և ընկերներին
- խոսել Ֆրանսիայի և ֆրանսիական տոների մասին
- զրուցել սիրելի զբաղմունքի մասին
- շնորհակալություն հայտնել և պատասխանել շնորհակալությանը
- ընդունել առաջարկությունը, օգնությունը, կամ էլ բարեկիրթ ձևով մերժել դրանք
- հասկանալ և կարճ ձևով տալ տեքստի գլխավոր տեղեկությունը և գաղափարը

- կարողանալ ճիշտ բացատրել ճանապարհը
- կարողանալ կարդալ և հասկանալ անձնական քարտի կետերի պահանջները, որոնք պետք է լրացնել
- հասկանալ ընթերցվող տեքստի (պարզ նկարագրություն, պարզ տեղեկատվություն, հայտարարություն, գովազդ, մանկական երգեր և ոտանավորներ, կարճ պատմվածքներ և երկխոսություններ) ընդհանուր բովանդակությունը
- կարողանալ կռահել տեքստում առկա երկու-երեք անծանոթ բառերի իմաստները տեքստի ընդհանուր մտքից
- կարողանալ համապատասխանեցնել բառը նկարի հետ:

*ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ*

Արդյունքի յուրացումը գնահատվելու է հարց ու պատասխանի և գործնական առաջադրանքների միջոցով: Աշակերտին կտրվի ամփոփիչ թեստ, ստուգելու համար անցած ուսուցանված քերականական նյութի ընկալման մակարդակը: Աշակերտը պետք է կարողանա ինքնուրույն կազմել նախադասություններ, կատարել քերականական վարժություններ, ֆրանսերենով ներկայացնել իրեն, ընտանիքը և իր դպրոցը, բանավոր խոսքի մեջ ուղղել ընկերների սխալները, իր տարիքին համապատախան դիտել մուլտֆիլմեր և ներկայացնել:

Արդյունքի գնահատման որոշակի քայլեր (մասնավորապես հարց ու պատասխանը, գործնական առաջադրանքների կատարումը), խմբային մրցույթները նպատակահարմար է կիրառել արդյունքի ուսուցման ընթացքում:

Արդյունքի ձեռքբերումը համարվում է բավարար, եթե աշակերտը ճիշտ է կատարում գործնական հանձնարարությունները, ոչ էական,փոքր թերություններով:

*ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ*

Արդյունքի ուսուցումն իրականացվում է գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ տեսա և ձայնային դասեր, քերականական պաստառներ, էլեկտրոնային գրատախտակ, ականջակալներ, գունավոր տպիչ սարք, դյուրակիր համակարգիչներ

*ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ*

Գործնական ուսուցում 34 ժամ

| Հ/Հ | ԹԵՄԱ | ԸՆԴՀ. | ՏԵՍ. | ԳՈՐԾ. |
|---|---|---|---|---|
| 1 | Je t'invite | 1 | | 1 |
| 2 | College, ecole ou lycee | 1 | | 1 |
| 3 | Les prenoms a la fete,les article definis | 1 | | 1 |
| 4 | Joyeux anniversaire, phonetique | 1 | | 1 |
| 5 | Les mots pour poser des questions et decrier une personne | 1 | | 1 |
| 6 | Photos de famille les conjugaisons | 1 | | 1 |
| 7 | Noel et compagnie | 1 | | 1 |
| 8 | Beaucoup de cadeaux | 1 | | 1 |
| 9 | Qui suis je ? | 1 | | 1 |
| 10 | Des felicitations et des cadeaux toute l'annee | 1 | | 1 |
| 11 | Les Francais aiment les fetes… | 1 | | 1 |
| 12 | Voici d'autre fetes que les Francais celebrent | 1 | | 1 |
| 13 | Fetes de famille | 1 | | 1 |
| 14 | Apprendre des mots nouveaux | 1 | | 1 |
| 15 | Qu'est ce qu'on fait? | 1 | | 1 |
| 16 | Comment on fait? | 1 | | 1 |
| 17 | Un cours de Yoga | 1 | | 1 |
| 18 | J'ai mal | 1 | | 1 |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 19 | Un loisir spectaculair | 1 | | 1 |
| 20 | Loisir jeune | 1 | | 1 |
| 21 | Memoriser des mots en francais | 1 | | 1 |
| 22 | Une autre ville | 1 | | 1 |
| 23 | Itineraires | 1 | | 1 |
| 24 | Orientation et transport | 1 | | 1 |
| 25 | Paris | 1 | | 1 |
| 26 | La ville | 1 | | 1 |
| 27 | S'orienter dans une ville | 1 | | 1 |
| 28 | Test | 1 | | 1 |
| 29 | Quelle heure est il? | 1 | | 1 |
| 30 | La journee de Jade | 1 | | 1 |
| 31 | Quel temps fait il? | 1 | | 1 |
| 32 | Charade | 1 | | 1 |
| 33 | Pendant ce temps la… | 1 | | 1 |
| 34 | La France du bout du monde | 1 | | 1 |
| | ***ԸՆԴԱՄԵՆԸ*** | ***34*** | | ***34*** |

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ, ՀՂՈՒՄՆԵՐ


- https://www.francaisfacile.com/cgi2/myexam/liaison.php?liaison=_grammaire_
- https://www.enseignants.hachette-education.com/college/classe/3e-4199/disciplines/francais-5075
- https://www.i-profs.fr/Fiches/gs/graphisme/gs-graphisme.php
- https://ru.scribd.com/document/343612176/264905617-Exercices-de-Grammaire-en-Contexte-Debutant-Corriges-pdf
- Nouveau Pixel method e de francais cahier d'activites